

Լ. Խ. ԴԻԼՍՆՅԱՆ

ՄԻՐԱՆԻ ՍՈՐՏԵՐԻ ՈՐՈՇԻՉԸ
ՏՆԿԱՐԱՆՈՒՄ

ՀԱՅՊԵՏՀՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ի ՍՆՆԴԱՐԴԺՈՂԿՈՄՄԱՏԻ ԱՅԳԵՊՏՂԱԲՈՒԾԱԿԱՆ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՍԵՂԵԿՑԻՈՆ ԿԱՅԱՆ

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ն Ս Ե Ր Ի Ս № 1

63421
Դ-47

Հ. Խ. ԳԻՒԱՆՅԱՆ

USDA 1961

ԾԻՐԱՆԻ ՍՈՐՏԵՐԻ ՈՐՈՇԻՉԸ
ՏՆԿԱՐԱՆՈՒՄ

4798

A 18806



Հ Ա Յ Գ Ե Տ Հ Ր Ա Տ
ԵՐԵՎԱՆ • 1942

ԽՄԲԱԳԻՐԱԿԱՆ ԿՈՒՆԿԻՍ.

Ն. Ն. ՊՐՈՍՏՈՍԵՐԳՈՎ—բիւլոց. գիտ. դոկտոր
Մ. Հ. ՄԱԼԽՍՅԱՆ—գյուղատնտ. գիտ. բեկ. դոցենտ
Վ. Ա. ՍԱՅԱԴՅԱՆ—ավագ գիտ. աշխատող

Հնգնանուր խմբագրւոյամբ գյուղատնտ. գիտ. դոկտոր՝ պրոֆ. **Մ. Գ. ՔՈՒՄԱՆՅԱՆԻ**
Պատ. խմբագիր—գյուղատնտ. գիտ. բեկ. դոցենտ **Մ. Հ. ՄԱԼԽՍՅԱՆ**

Գործնականում քիչ չեն այն դեպքերը, երբ տնկարանում պատվաստի կամ հանման ժամանակ իրար է խառնվում տնկանյութը:

Բացառված չեն նաև սորտային նշումների ու դաշտային դրանցումների կորստյան դեպքերը:

Տնկիների սորտերը դեռ միամյա հասակում ճանաչելու և ճշտորեն ստուգված տնկանյութ ունենալու գործում արտադրութային օգնելու նպատակով մենք կազմեցինք տնկարանում ծիրանի սորտերը ճանաչելու ներկա որոշիչը:

Այս հարցն առանձնահատուկ նշանակություն է ստանում Հայկական ՄՍՌ Ժողկոմսովետի ու ՀԿ(Բ)Պ Կենտկոմի 1941 թ. փետրվարի 8-ի որոշման կապակցությամբ՝ կոլտոջային տնկարանների ցանցի միջոցով նոր պտղատու այգիները տնկիներով ապահովելու մասին: Քանի որ ծիրանենին տնկարաններից բաց է թողնվում միամյա հասակում, ուստի տնկարանում սորտերի իդենտիֆիկացրայի (նույնացման) համար կարելի է սահմանափակվել միայն միամյա շվի մորֆոլոգիական հատկանիշները որոշելով:

Պետք է մատնանշել, որ տնկարանում սորտերի որոշման հարցին անցյալում համեմատաբար քիչ ուշադրություն է դարձվել թե ՄՍՌՄ-ում և թե արտասահմանում: Միայն 1931 թվականին «Համառուկրանական պոմոլոգիական դրքում» — մենք հանդիպում ենք խնձորենու ստանդարտ սորտերի որոշմանը վերաբերող նյութերի որոշիչների:

Իրոմետրիկական մշակման միջոցով միամյա շվերի բնորոշ առանձնահատկությունների պարզումը և նրանց կայունություն աստիճանի որոշելը՝ անման դանազան էկոլոգիական պայմանների ֆոնի վրա — հնարավորություն է տվել օգտագործել դրանք՝ միամյա պտղատու տնկարանների սորտերը որոշելու համար:

Տնկարանում սորտերի նկարագրման աշխատանքների պրոցեսում պարզվել է, որ ծիրանի սորտերն այստեղ ևս խիստ տարբերվում են միմյանցից: Տնկարանում ինչպես խնձորենիների, այնպես էլ ծիրանենիների սորտերի բնորոշ հատկանիշները հետևյալներն են.

1. Շվերի ծավածություն:
2. Շվերի կողային ճյուղավորում:
3. Կեղևի գունավորում:

4. Տերևի առանձնահատկությունները (ձևը, գույնը, եղբերի ատամնավորությունը, տերևի գոգավորության բնույթը):

Շվի ծովածուխյունն արահայտվում է երկու հատկանիշներով՝ ծովածուխյան բնույթով և բնի թեքության ուժեղությամբ (թեքվածքի աստիճան):

Ծովածուխյան բնույթով՝ արտահայտվում է շվի ծովածուխյունն իր առանցքի շուրջը և որոշվում է միամյա շվի իրական երկարության և կառուցված բարձրության միջև եղած տարբերության հարաբերությամբ՝ հանդեպ կառուցված բարձրությունը:

Ծովածուխյան ուժի չափանիշ է ընդունվում բնի սկզբնական ուղղության հանդեպ եղած թեքության աստիճանը, որը որոշվում է միամյա շվի հիմքի և շվի գագաթից իջեցված ուղղահայաց գծի հիմքի միջև եղած տարածության հարաբերությամբ՝ կառուցված բարձրության նկատմամբ:

Բնի իսկական երկարությունն ընդունելով A_1 , կառուցված բարձրությունը A_2 և ուղղահայաց գծի՝ ու բնի հիմքերի հեռավորությունը A_3 , ծովածքի բնույթը կարելի է արտահայտել հետևյալ ֆորմուլայով.
$$\frac{(A_1 - A_2) \cdot 100}{A_3},$$
 իսկ ծովածքի չափը $\frac{A_3 \cdot 100}{A_2}$

ՓՈՐՁԻ ՄԵԹՈՒԳԻԿԱՆ

Սորտերի նկարագրման աշխատանքը կատարված է 1933 և 1935 թվականներին, կայանի տնկարանում և Թաղապուղի արտադրական տնկարանում, պտղա-հատապտղային տնտեսության Ուկրաինական ինստիտուտի մեթոդիկայով:

Տնկիների բոլոր չափումներն ու նկարագրությունները կատարված են վեգետացիայի վերջում, հոկտեմբեր ամսին, երբ բոլոր հատկանիշները վերջնականապես զբստորվել էին:

Գույները որոշելիս օգտվել ենք Օստավալդի գույների շխալայից և միաժամանակ կողմնորոշվել աչքաչափով: Ուսումնասիրության են ենթարկվել ծիրանի բոլոր տեղական ստանդարտային սորտերը: Յուրաքանչյուր սորտից նկարագրված է 50 սնկի:

Հայտնի է, որ գոյություն ունի ուղղակի կախում ծովածուխյան բնույթի և թեքության չափի (աստիճանի) միջև. այս պատճառով մեզանում կարելի է թույլ ծոված համարել այն սորտերը, որոնց ծովածքի կոեֆիցիենտը 10-ից պակաս է, իսկ ուժեղ ծոված կարելի է համարել այն սորտերը, որոնց ծովածքի կոեֆիցիենտը 15-ից ավելի է:

Կողային ճյուղերի քանակությամբ՝ ծիրանի տեղական բոլոր սորտերը, որոնք նկարագրված են տնկարանում, կարելի է դասել

ուժեղ չափով ճյուղավորվողների շարքը, սակայն այստեղ ևս կարելի է սորտերի որոշ խմբավորում կատարել:

Տեղական ծիրանենու զանազան սորտերի կողային ճյուղերի քանակութիւնը տատանվում է 7-ի և 20-ի միջև:

Առաջին խմբին են վերագրված համեմատաբար քիչ ճյուղավորվող սորտերը, որոնց կողային ճյուղերի թիվը 10-ի է հասնում:

Երկրորդ խմբին—10-ից մինչև 15 կողային ճյուղեր ավող սորտերը և վերջապես երրորդ խմբին—ուժեղ չափով ճյուղավորվող սորտերը, որոնք ունենում են 15-ից ավելի ճյուղեր:

Ըստ կեղևի գույնի՝ մեր նկարագրած սորտերը նույնպես կարելի է բաժանել 3 խմբի:

1-ին խումբ—սորտեր, որոնց կեղևը հիմնականում ունենում է կանաչ գույն. դարչնագույն երանգավորումները երևան են գալիս միայն վեգետացիայի վերջում:

2-րդ խումբ—սորտեր—գերակշռում է դարչնի գույնը: Կանաչ երանգավորումները թույլ են և նկատվում են միայն հիմքի մոտ, ստվերակողմում:

3-րդ խումբ—սորտեր—գերակշռում է կարմիր գույնը. հիմքի մոտ, ստվերակողմում բունը դարչնագույն է:

Մեր նկարագրած սորտերի ճնշող մեծամասնութիւնն ունի դարչնագույն կեղև: Այդպես են հետևյալ սորտերը՝ շալախ, խոսրովշահի, գյոզմանաբաղ, արութալիբի, դեռնդի, սարի-բաղամ, գյոյ-բաղամ, համբան, աղջանաբաղը:

Աննշան քանակութիւնով սորտեր, ինչպես օրինակ նախիջևանի կարմիրը, թաբարզան և բաղամարիկը, հիմնականում ունեն կեղևի կարմիր գույն և միայն ծիրան-սալոր սորտը կանաչ գույնի է:

Ըստ ծովածութիւնի չափի ու բնույթի նույն սորտերը կարելի է բաժանել հետևյալ 3 խմբերի.

1-ին խումբ—ուժի ուղիղ կամ համարյա ուղիղ բուն—նախիջևանի կարմիր և աղջանաբաղ:

2-րդ խումբ—ուժի թույլ կամ միջին չափով ծոված բուն—խոսրովշահի, թաբարզա, համբան, արու-թալիբի և սարի-բաղամ:

3-րդ խումբ—ուժի ուժեղ չափով ծոված բուն—շալախ, դեռնդի, գյոզմանաբաղ, բաղամարիկ, գյոյ-բաղամ և ծիրան-սալոր:

Ըստ կողային ճյուղերի քանակութիւնի նկարագրվող սորտերը խմբավորվում են հետևյալ կարգով. համեմատաբար քիչ են ճյուղավորվում (մինչև 10 ճյուղ) խոսրովշահի և աղջանաբաղ սորտերը: Միջին չափով ճյուղավորվում են (10-ից մինչև 15 ճյուղ) շալախը, թաբարզան, արութալիբին, սարի-բաղամը, դեռնդին, համբանը, բաղամարիկը: Ծատ են ճյուղավորվում (մինչև 20 ճյուղ) նախիջևանի կարմիրը, գյոզմանաբաղը, գյոյ-բաղամը, ծիրան-սալորը:

Ըստ տերևների ձևի նրանց կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. Կլորափուն տերևներ ունեն՝ դյուզջանաբազը, աղջանաբազը, համբանը, դյոյ-բաղամը, արութալիբին:
 2. Տափակ-կլորափուն տերևներ ունեն՝ խոսրովչահին, թաբար-դան, դեոնդին:
 3. Լալն-ձվածե տերևներ ունեն՝ շալախը և բաղամարիկը:
 4. Զվածե տերևներ ունի՝ սարի-բաղամը:
 5. Երկարափուն-ձվածե տերևներ ունեն՝ նախիջևանի կարմիրը, ծիրան-սալորը:
- Վերևում նկարագրված բուսաբանական-մորֆոլոգիական հատկանիշները հնարավորութիւն են տալիս նրանց հիման վրա կազմել ծիրանի սորտերի որոշիչը անկարանում:

Աղուտակ № 1

ԾԻՐԱՆԻ ԶԱՆԱԶԱՆ ՍՈՐՏԵՐԻ ԲՆԻ ԾՌՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

| Սորտերի անունները | Ծավածքի քանակը | | | Ծավածքի ուժեղութիւնը | | | Աճման ուժը |
|---------------------|----------------|--------|--------|----------------------|--------|--------|---------------|
| | 1933թ. | 1935թ. | միջինը | 1933թ. | 1935թ. | միջինը | |
| 1. Շալախ | 2,56 | 3,56 | 3,06 | 19,43 | 15,99 | 17, 1 | 140սմ + 6, 12 |
| 2. Թաբարգա | 1,23 | 4, 2 | 2,71 | 13,85 | 15, 14 | 14, 49 | 123,5 + 5, 25 |
| 3. Ղեոնդի | 7, 12 | 3,08 | 5, 1 | 29,54 | 16, 6 | 23,07 | 139,8 + 7, 68 |
| 4. Խոսրովչահի | 0, 4 | 1,82 | 1, 11 | 12,87 | 16, 5 | 14, 68 | 124,8 + 5, 4 |
| 5. Գյոզջանաբազ | 4,32 | 3,15 | 3,73 | 25,83 | 17,95 | 21,89 | 144,75 + 1, 5 |
| 6. Համբան | 1,94 | 4, 7 | 3,32 | 7,71 | 17, 7 | 12, 7 | 132,12 + 6, 8 |
| 7. Աղջանաբազ | 0,88 | 6,44 | 3,63 | 2, 5 | 18,25 | 10,37 | 120,8 |
| 8. Բաղամարիկ | 6,81 | 4,23 | 5,52 | 13,81 | 19,33 | 15,57 | 152,75 |
| 9. Սարի-բաղամ | 3,41 | 1,92 | 2,66 | 19,98 | 14,73 | 15,35 | 114,0 + 5, 43 |
| 10. Գյոյ-բաղամ | 9,28 | — | 9,28 | 83,31 | — | 83,31 | 168,3 |
| 11. Նախիջևանի կարմ. | 0,64 | 4,71 | — | 4,71 | — | 4,71 | 156 + 6, 5 |
| 12. Արութալիբի | 1,19 | — | 1,19 | 13,58 | — | 13,58 | 135 + 2, 15 |
| 13. Ծիրան-սալոր | 10,53 | — | 10,53 | 48,85 | — | 48,85 | 144,8 |

Աղուտակ № 2

ԾԻՐԱՆԵՆՈՒ ԶԱՆԱԶԱՆ ՍՈՐՏԵՐԻ ԿՈՂԱՅԻՆ ՃՅՈՒՂԵՐԻ ՔԱՆԱԿԸ

| Սորտի անունը | Ճյուղերի քանակը | Սորտի անունը | Ճյուղերի քանակը |
|---------------|-----------------|----------------------|-----------------|
| 1. Խոսրովչահի | 7 | 8. Բաղամարիկ | 14 |
| 2. Աղջանաբազ | 10 | 9. Համբան | 15 |
| 3. Սարի-բաղամ | 12 | 10. Ծիրան-սալոր | 17 |
| 4. Ղեոնդի | 11 | 11. Նախիջևանի կարմիր | 19 |
| 5. Շալախ | 12 | 12. Գյոզջանաբազ | 19 |
| 6. Թաբարգա | 13 | 13. Գյոյ-բաղամ | 20 |
| 7. Արութալիբի | 13 | | |

Ծիրանեցու սորտերի որոշիչը տնկարանում

1. Ուշից բուն (2):

0. Ծուււր բուն (3):

2. Կեղևը դարչնագույն-կարմիր է, ծառն ուժեղ չափով ճյուղավորվում է, տերևը երկարավուն-ձվաձև է, աճող շիվը—դարչնագույն-կարմիր՝ նախիջևանի-կարմիր:

0. Կեղևը դարչնագույն է, ծառը ճյուղավորվում է համեմատաբար թույլ, աճող շիվը կարմրավուն-դարչնագույն է, տերևը—կլորավուն՝ աղջանաբաղ:

3. Միջին ծովածք ունեցող բուն (4):

0. Նիստ ծոված բուն (8):

4. Հարթ-կլորավուն տերև (5):

0. Այլ ձևի տերև (6):

5. Կեղևը կարմիր գույն ունի, տերևը մուգ-կանաչ է, մակերևույթը հարթ, փայլուն: Տերևի թիթեղը ծաված է համարյա զլատավոր նյարդի երկարությամբ: Աճող շիվը մանիշակագույն-կարմիր է՝ քաբարգա:

0. Կեղևը դարչնագույն է, տերևը դեղնականաչավուն է, սառբին կողմից նյարդերի երկարությամբ թավոտ է: Աճող շիվը կարմիրանյուն-կարմիր գույն ունի՝ խոտրովչանի:

6. Կլորավուն ձևի տերև (7):

0. Տերևը ձվաձև է, տերևի եզրերը մանր-բուլբուլաձև ստամենավորած: Կեղևը դարչնագույն է, աճող շիվը կարմրավուն-դարչնագույն է՝ սարիբաղամ:

7. Տերևի եզրերը երկակի, խոշոր, սուր-ատամնավոր են: Տերևի թիթեղը սառբին կողմից ծածկված է կարճլիկ մաղիկներով: Կեղևը դարչնագույն է: Աճող շիվը կարմիր է, մանիշակագույն երանգավորումով՝ արուքալիբի:

0. Տերևի եզրերը սուր-խոշոր-ատամնավոր են: Տերևը դեղնականաչավուն է: Կեղևը-կանաչադարչնագույն է, աճող շիվը կանաչադարչնագույն է՝ համբալի:

8. Բունը շատ է ճյուղավորվում (10):

0. Բունը միջին չափով է ճյուղավորվում (9):

9. Կեղևի գույնը կարմիր է, աճող շիվը բաց-դեղնականաչագույն է, տերևը—լայն-ձվաձև: Տերևն ունի մուգ-կանաչ գույն՝ բաղամարիկ:

0. Կեղևը դարչնագույն է (12):

10. Կեղևի գույնը կանաչ, աճող շիվը կարմրավուն կանաչ է, տերևը—երկարավուն-ձվաձև, եզրերը—սղոցա-ատամնավոր՝ ծիրան-սալոր:

0. Կեղևը դարչնագույն է (11):

11. Աճող շիվը մուգ-կարմիր գույն ունի, տերևը կլորավուն է,

դեղնավուն-կանաչ գույնի, եզրերը մանր-ատամնավոր են՝ գոգ-
ջանաբաղ:

Օ. Աճող շիվը վառ-վարդագույն է, տերեւը կլորավուն, դեղնա-
վուն-կանաչ գույնի է, եզրերը երկակի, խոշոր, ըսթ-ատամն ավոր են՝
գոյ-բաղամ:

12. Աճող շիվը բալի պես կարմիր գույնի է, տերեւը՝ լայն-ձվա-
ձև, տերեւի գույնը՝ դեղնավուն-կանաչ է՝ շալթի:

Օ. Աճող շիվը վարդագույն-դարչնագույն է, տերեւը հարթ-կլորա-
վուն է: Բաց-դեղնավուն-կանաչ գույնի՝ դեղնի:

ԾԻՐԱՆԵՆՈՒ ՍՈՐՏԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՆԿԱՐԱՆՈՒՄ

Շ Ա Լ Ա Խ

Բունը խիստ ծոված է (ընույթը—3,06, ծովածքի ուժեղություն-
ը—17,1). ունի միջին չափի ճյուղավորում (12 ճյուղ): Կեղևը դարչ-
նազույն է (ըստ Օստվալդի շկալայի Pn II 5,5): Աճող շիվն ունի
մուգ-բալի գույն կապտավուն երանգավորումով (ըստ Օստվալդի շկա-
այի Pi IV 7,5): Տերեւի թիթեղը ծաված է դեպի ներքև, տերեւակո-
թին ուղղահայաց: Տերեւթիթեղի երկու կեսերը մի փոքր թեքված
են դեպի վեր:

Տերեւը լայն-ձվաձև է, գաղաթն աստիճանական սուր ձևի է ու
թեքված է դեպի ներքև:

Տերեւի թիթեղը մաշկանման է, ունի միջակ հաստություն, մա-
կերեսը մի փոքր ալեձև է և լերկ:

Տերեւի եզրերը խոշոր-երկակի-կլորավուն-ատամնավոր են:

Տերեւի հիմքը երկարավուն է:

Տերեւն ունի դեղնավուն-կանաչ գույն (Pi VI 1), փայլուն է:

Խ Ո Ս Ր Ո Վ Շ Ա Ն Ի

Բունն ունի միջին թեքություն (ծովածության ընույթը—11,
ծովածքի ուժեղությունը 14,7), համեմատաբար թույլ է ճյուղավոր-
վում (7 ճյուղ):

Կեղևը կանաչավուն-դարչնագույն է (ըստ Օստվալդի շկալայի՝
Pn II 5,5):

Աճող շիվը վառ կարմինային-կարմիր գույնի է, մի փոքր գոր-
շավուն երանգավորումով (ըստ Օստվալդի շկալայի՝ Pi VI 7,5):

Տերեւի թիթեղը ծոված է դեպի ներքև՝ տերեւակոթին ուղղահա-
յաց: Տերեւի երկու կեսերը ծոված են դեպի վեր, գլխավոր նյարդի
երկարությամբ:

Տերևը հարթ-կլորավուն է: Կարճլիկ, անմիջապես նեղացող, դեպի ներքև հակված գագաթով:

Տերևի թիթեղը մաշկանման է, մի փոքր ալեձև մակերեսով: Տերևի ծայրերը խոշոր, երկակի կլորաձև ատամնավոր են:

Տերևն ունի դեղնավուն կանաչ գույն (ըստ Օստվալդի—Pi VI 1), փայլուն է: Տերևի ստորին մասում նյարդերի երկարությամբ նկատվում է թավոտություն:

Ք Ա Բ Ա Բ Ձ Ա

Բունն ունի միջին ծովածություն (ծովածքի բնույթը—2,7, ծովածքի ուժեղությունը 14,5): Ծյուղավորումը միջակ է (13 ճյուղ):

Տերևը մուգ դարչնագույն կարմիր է (ըստ Օստվալդի—Pn II 6,5):

Աճող շիվը բաց մանիշակավուն կարմիր է (ըստ Օստվալդի ic VI 7,5):

Տերևի թիթեղը ծոված է դեպի ներքև, տերևակոթին ուղղահայաց: Տերևի երկու կեսերը խիստ թեքված են դեպի վեր—գլխավոր նյարդի երկարությամբ, այնպես որ տերևը թվում է կեսից ծաված:

Տերևն ունի հարթ-կլորավուն ձև, միանգամից նեղացող և դեպի ներքև ձգված գագաթով:

Տերևաթիթեղը նուրբ է, ունի մի փոքր ալեձև մակերես: Տերևի եզրերը կրկնակի խոշոր ատամնավոր են:

Տերևի գույնը մուգ կանաչ է (ըստ Օստվալդի՝ Pi IV 1), փայլուն: Տերևի ստորին կողմում, նյարդերի անկյուններում կա մորուքանման թավոտություն:

Գ Յ Ո Կ Ձ Ա Ն Ա Բ Ա Գ

Բունը խիստ ծոված է (ծովածության բնույթը—3,7, ծովածքի ուժեղությունը—21,9), շատ է ճյուղավորվում (19 ճյուղ):

Կեղևը դարչնագույն է, հիմքի մոտ ունի մի փոքր կանաչավուն երանգավորում (ըստ Օստվալդի՝ Pn II 6,5):



Նկ. № 1. Միամյա տնկու նկար (խոտրովչահի)

Աճող շիվը մուգ կարմիր գույնի է, փայլատ (ըստ Օստվալդի՝ ri VIII 7,0):

Տերևաթիթեղը ծալված է դեպի ներքև, տերևակոթին ուղղահայաց: Տերևի երկու կեսերը մի փոքր ծալված են դեպի վեր—տերևի գլխավոր նյարդի երկարությամբ:

Տերևը կլորավուն է ու վերջանում է բուլթ, կարճիկ գազաթով, տերևի հիմքը համարյա ուղիղ է, հազվագյուտ դեպքերում մի փոքր երկարավուն:

Տերևաթիթեղը հաստ է, մսալի և հարթ:

Տերևի եղբերը մանր, կլորավուն պտամնավոր են: Տերևի գույնը դեղնավուն-կանաչ է (ըստ Օստվալդի՝ Pi VI 1):

Ա. Բ. ՈՒ Թ Ա. Լ. Ի Բ Ի

Բնի ծովածքը միջին չափի է (ծովածքի բնույթը—1,19,ծովածքի ուժեղությունը—13,6):

Ճյուղավորումը միջակ է (13 ճյուղ):

Կեղևը կանաչավուն-դարչնագույն է (ըստ Օստվալդի՝ Pn II 5,0):

Աճող շիվը կարմիր է, մանիշակագույն երանգավորումով (ըստ Օստվալդի՝ Pi VI 8,5):

Տերևաթիթեղը ծալված է դեպի ներքև, տերևակոթին ուղղահայաց:

Տերևի երկու կեսերը գտնվում են գլխավոր նյարդի հետ միևնույն մակարդակի վրա: Տերևը կլորավուն է, կարճիկ, անմիջապես նեղացող և սուր գազաթով:

Տերևի հիմքը երկարավուն է, մակերեսը հարթ: Վերին ու ստորին կողմից կեղևը ծածկված է նոսր կարճիկ մազիկներով:

Տերևի եղբերը երկակի, խոշոր, սղոցա-պտամնավոր են:

Տերևի գույնը մուգ կանաչ է, փայլատ (ըստ Օստվալդի՝ Pn IV 1):

Բ Ա Գ Ա Մ Ա Բ Ի Կ

Բունը խիտ ծոված է (ծովածքի բնույթը 5,5, ծովածքի ուժեղությունը 15,6): Ճյուղավորումը միջակ է (14 ճյուղ):

Կեղևը դարչնագույն կարմիր է՝ շոկոլադի գույնի (ըստ Օստվալդի՝ Pn II 7,5):

Աճող շիվը բաց դեղնավուն-կանաչ գույն ունի (ըստ Օստվալդի՝ ie II 1,5):

Տերևաթիթեղը ծալված է դեպի ներքև, տերևակոթին ուղղահայաց:

Տերևի երկու կեսերը մի քիչ ծոված են դեպի վեր, գլխավոր

նյարդի երկարութեամբ, տերևը կլորավուն ձվաձև է, անմիջականորեն նեղացող ու դեպի ներքև ձգված դադաթով:

Տերևի հիմքը քիչ երկարաձգված է: Տերևաթիթեղը մաշկոտ է, միջակ հաստութեամբ:

Տերևի եզրերը երկակի, խոշոր, կլորավուն-ատամնավոր են:

Տերևը կանաչ գույնի է, փայլուն (ըստ Օստվալդի՝ Pn II 1):

Ս Ա Ր Ի—Բ Ա Դ Ա Մ

Բունը միջակ ծովածութուն ունի (ծովածքի բնույթը—2,7, ծրվածքի ուժեղութունը—15,4): Ճյուղավորումը միջակ է (12 ճյուղ):

Կեղևը մուգ դարչնագույն է, բնի հիմքի մոտ նկատելի են կանաչ երանգավորումներ (ըստ Օստվալդի՝ Pn II 6):



Նկ. № 2. Միամյա տնկու նկար (գլոյ-բազամ)



Նկ. № 3. Միամյա տնկու նկար (համբան)

Աճող շիվը կարմրավուն-դարչնագույն է (ըստ Օստվալդի՝ Pg VIII 7,5):

Տերևաթիթեղը ծոված է դեպի ներքև, տերևակոթին ուղղահայաց: Տերևի երկու կեսերը մի փոքր ծոված են դեպի վեր:

Տերևը ձվաձև է, դեպի ներքև հակված գագաթով: Տերևի հիմքը մի փոքր երկարավուն է, թիթեղը հաստ է և հարթ:

Տերևի եզրերը մանր կտրավուն-ատամնավոր են: Տերևը վառ կանաչ գույնի է, փայլուն (ըստ Օստվալդի՝ Pi IV 1):

Գ Յ Ո Յ - Բ Ա Դ Ա Մ

Բույնը խիստ ծոված է (ծովածքի բնույթը—9,3, ծովածքի ուժեղությունը—33,3): Ճյուղավորումն առատ է (20 ճյուղ):

Կեղևը մուգ դարչնագույն է (ըստ Օստվալդի շկալայի՝ Pn II 6):

Աճող շիվը բալի-կարմիր գույնի է (ըստ Օստվալդի՝ iaVI 7,5):

Տերևաթիթեղը ծաված է դեպի ներքև, տերևակոթին ուղղահայաց:

Տերևի երկու կեսերը մեծ չափով բարձրացված են գլխավոր նյարդի երկարությամբ:

Տերևը կտրավուն է, բուժ կարճ գագաթով:

Տերևի հիմքն ուղիղ է, որոշ տերևներին հիմքը—մի փոքր երկարավուն: Տերևաթիթեղը նուրբ է, մի փոքր ալեձև մակերեսով:

Տերևի եզրերը խոշոր-երկակի-կտրավուն-ատամնավոր են:

Տերևի մակերեսը դեղնավուն-կանաչ է, փայլուն (ըստ Օստվալդի շկալայի՝ Pi VI 1): (Տես նկ. 2)

Հ Ա Մ Բ Ա Ն

Բույնը միջին ծավածություն ունի (ծովածքի բնույթը—3,3, ծովածքի ուժեղությունը—12,7): Ճյուղավորումը միջակ է (15 ճյուղ):

Կեղևը կանաչավուն-դարչնագույն է (ըստ Օստվալդի շկալայի՝ Pn II 5,5):

Աճող շիվը կանաչավուն-կարմիր է (ըստ Օստվալդի շկալայի՝ Pn II 3):

Տերևաթիթեղը ծաված է դեպի ներքև, տերևակոթին ուղղահայաց: Տերևը կտրավուն, կարճլիկ, միանգամից նեղացող և դեպի ներքև հակված գագաթով:

Տերևի հիմքը ուղիղ է, որոշ տերևներին հիմքերը—դեպի ներս թեքված: Տերևի եզրերը խոշոր-սուր ատամնավոր են: Տերևի վերին մակերեսի գույնը դեղնավուն-կանաչ է (ըստ Օստվալդի շկալայի՝ Pi VI 1): (Տես նկ. 3)

Բունը խիստ ծոված է (ծովածքի բնույթը—5,1, ծովածքի ուժեղութիւնը—23,07):

Ճյուղավորումը համեմատաբար թույլ է (11 ճյուղ):

Կեղևը կանաչավուն-դարչնագույն է (ըստ Օստվալդի շկալայի՝ Pn II 5):

Աճող շիվը վարդագույն-դարչնագույն է (ըստ Օստվալդի շկալայի՝ ic IV 7,5):

Տերևաթիթեղը ծավված է դեպի ներքև, տերևակոթին ուղղահայաց: Տերևի երկու կեսերը բարձրացված են դեպի վեր՝ գլխավոր նյարդի երկարութեամբ: Տերևը հարթ-կլորավուն է, կարծրիկ-դեպի ներքև ձգված գագաթով:

Տերևաթիթեղն ունի միջին հաստութիւն, մաշկոտ է, ալեձև մակերեսով:

Տերևի եզրերը երկակի-խոշոր-կլորավուն-ատամնավոր են:

Տերևի վերին մակերեսի գույնը բաց դեղնավուն-կանաչ է, փայլուն, (ըստ Օստվալդի՝ Pi VI 1):

Ա Ղ Զ Ա Ն Ա Բ Ա Գ

Բունը համարյա ուղիղ է (ծովածքի բնույթը—3,6, ծովածքի ուժեղութիւնը—10,3): Ճյուղավորումը համեմատաբար թույլ է (10 ճյուղ):

Կեղևը դարչնագույն է (ըստ Օստվալդի՝ Pn II 5,5):

Աճող շիվը կարմրավուն-դարչնագույն է (ըստ Օստվալդի՝ Pi VI 7,5):

Տերևաթիթեղը ծավված է դեպի ներքև, տերևակոթին ուղղահայաց: Տերևի երկու կեսերը մի փոքր բարձրացված են գլխավոր նյարդի երկարութեամբ:

Տերևը կլորավուն է, կարճիկ, մի փոքր ոլորուն ու դեպի ներքև հակված գագաթով:

Տերևի թիթեղը հաստ է, մսալի և հարթ: Տերևի եզրերը խոշոր, կլորավուն-ատամնավոր են: Տերևի վերին մակերեսի գույնը բաց կանաչ է, դեղնավուն երանգավորումով, փայլուն է (ըստ Օստվալդի՝ Pi IV 1): (Տես նկ. 4):



Նկ. № 4. Միամյա տնկու նկաջ
(աղջանաբաղ)



Նկ. № 5. Միամյա տնկու նկաբ
(նախիջեվանի կարմիր)

Ն Ա Խ Ի Զ Ե Վ Ա Ն Ի — Կ Ա Ր Մ Ի Ր

Բուննն ուղիղ է (ծավածքի բնույթը—0,64, ծավածքի ուժեղու-
թյունը—4,7):

Ճյուղավորումն ուժեղ է (19 ճյուղ):

Կեղևը դարչնագույն կարմիր է (ըստ Օստվալդի շկալայի՝ Pi
IV 5,5):

Աճող շիվը բաց-դարչնագույն-կարմիր է (ըստ Օստվալդի՝ Pi
VI 7,5):

Տերևաթիթեղը ծարված է դեպի ներքև, տերևակոթին ուղղահա-
յաց: Տերևի երկու կեսերը բարձրացված են դեպի վեր գլխավոր նյար-
դի երկարությամբ:

Տերևը երկարավուն-ձվաձև է, երկար, մի փոքր ուրրուն և դեպի ներքև հակված դադաթով: Տերևի հիմքը համարյա ուղիղ է:

Տերևաթիթեղը հաստ է, մաշկոտ, մի փոքր խորդ ու բորդ: Տերևի եզրերը խոշոր-կլորավուն-ատամնավոր են:

Տերևի վերին մակերեսի դույնը բաց-կանաչ է, փայլատ (ըստ Օստվալդի՝ Pi IV 1): (Տես նկ. 5):

Р Е З Ю М Е

Настоящий определитель сортов абрикоса в питомнике составлен с целью помочь производству познавать сорта еще в однолетнем возрасте, чтобы иметь точно проверенный сортовой посадочный материал.

Вопрос этот приобретает особое значение в связи с постановлением Совнаркома и ЦККП(б) Армении от 8 февраля 1941 г. об обеспечении посадочным материалом вновь создаваемых плодовых насаждений через сеть колхозных питомников.

Так как абрикос отпускается из питомников в однолетнем возрасте, для идентификации сортов в питомнике мы ограничились лишь определением морфологических признаков однолетнего саженца.

Работа по описанию сортов проведена в 1933 и 1935 г. г. в питомнике Станции и в производственном питомнике в селе Тазагюх по методике Всеукраинского Института Плодо-ягодного хозяйства.

В процессе описания и определения сортов в питомнике выяснилось, что сорта абрикоса здесь резко отличаются друг от друга.

Характерными признаками сортов абрикоса, как и у яблонь, являются следующие:

1. Искривленность побега
2. Боковое ветвление побега
3. Окраска коры
4. Особенности листа (форма, цвет, зазубренность краев, характер изогнутости листа).

Определителем охвачены лишь местные стандартные, наиболее распространенные в Армянской ССР сорта абрикоса:

- | | |
|--------------|--------------|
| 1. Шалах | 3. Гей-бадам |
| 2. Хосровшай | 4. Гевонди |

5. Табарза

6. Геогджанабад

7. Агджанабад

8. Бадамарик

9. Сари-бадам

10. Нахчевани красный

11. Абуталиби

12. Амбан

13. Циран-салор

По характерным признакам все описанные сорта подразделяются на группы:

I. По силе и характеру искривленности ствола

Описанные сорта разбиты на 3 группы:

1. Сорта с прямым или почти прямым стволом—Нахчевани красный и Агджанабад.

2. Сорта со слабо и средне-искривленным стволом—Хосровшай, Табарза, Амбан, Абуталиби и Сари-бадам.

3. Сорта с сильно искривленным стволом—Шалах, Гевонди, Геогджанабад, Бадамарик, Гей-бадам, Циран-салор.

II. По степени обрастания боковыми ветвями сорта группируются в следующем порядке:

1. Сравнительно мало ветвятся (до 10 веток)—Хосровшай и Агджанабад.

2. Средис-ветвятся (от 10 до 15 ветвей)—Шалах, Табарза, Абуталиби, Сари-бадам, Гевонди, Амбан, Бадамарик.

3. Сильно ветвятся (до 20 ветвей)—Нахчевани красный, Геогджанабад, Гей-бадам, Циран-салор.

III. По окраске коры описываемые сорта также разбиваются на 3 группы:

1. Сорта в основном с зеленым цветом коры, у которых коричневые тона появляются лишь в конце вегетации—Циран-салор.

2. Сорта с преобладанием коричневого цвета, зеленые тона выражены слабо и наблюдаются лишь у основания на теневой стороне—Шалах, Хосровшай, Геогджанабад, Абуталиби, Гевонди, Сари-бадам, Гей-бадам, Амбан, Агджанабад.

3. Сорта с преобладанием красного цвета, у основания на теневой стороне ствол коричневого цвета—Нахчевани красный, Табарза, Бадамарик.

IV. По форме листьев они делятся на следующие группы:

1. С округлой листовой пластинкой—Геогджанабад, Агджанабад, Амбан, Гей-бадам, Абуталиби.

2. **Плоско-округлой формы**—Хосровшай, Табарза, Гевонди.
3. **Шароко-яйцевидной формы**—Шалах, Бадамарик.
4. **Яйцевидной формы**—Сари-бадам.
5. **Удлиненно-яйцевидной формы**—Нахчевани красный, Циран-салор.


Г. Х. ДИЛАНЯН
Определитель сортов абрикоса в питомнике
(На армянском языке)
Армгиз 1942 Ереван

ՀԹ 3533 Պատվեր 516. Տիրաժ 1000. Տպագրական 1 մամ. Մեկ մամուլում 39320 նշան 3535. Հեղինակային 3/4 մամ. Ստորագրված է ավագրութան 6/VIII—1942

Հաշվետնորաթ տպարան, Երևան, Լենինի 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008173

ԳԻՆԸ 90 ԿՈՊ.

A $\frac{11}{18806}$

1808.